Արձանագրություն 3
« ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով էլեկտրական աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.01.2019թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Գ.Գաբրիելյան – «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ
Անդամներ
Ն.Մաթևոսյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի բժիշկ-լաբորանտ
Մ. Սիմոնյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի ավագ քույր

Քարտուղար-գնումների համակարգող

Գ.Ամիրջանյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի տնտեսագետ

1. <u>ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնման գործընթացում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.2 «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ գրված մասնակիցների կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով, որ 56-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ գրված «Խաչպար» ՍՊԸ-ի որակավորման պահանջներն հիմնավորող փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրված չեն, որը համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի համարվում է խախտում, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ն հանդես է գալիս որպես ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն :

որոշեց՝

«ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և պահանջել «Խաչպար» ՍՊԸ-ից մինչև կասեցման ավարտը ներկայացնելու հավելվածների շտկված տարբերակները:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2019թ. հունվարի 25-ին, ժամը 16:00-ին «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի շենքում, հասցեն՝ ք.Վեդի, Գայի 1 հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Գաբրիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ն. Մաթևոսյան

_____ Մ. Սիմոնյան

Քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան